



ԻՆՉ ԵՄ ՓՆՏՐՈՒՄ

*«Եկե՛ք Ինձ մտա դուր բոլո՛րդ՝
հոգնածնե՛ք ու բեռնավորվածնե՛ք, և
Ես պիտի հանգիստ տամ ձեզ»:
Մատթևոս 11:28*

ԻՆՉ ԵՄ ՓՆՏՐՈՒՄ

Լրավական թերթերից մեկում գրված էր, որ հռչակավոր կինոաստղ Էլիզաբեթ Թեյլորն ասել է. «Աստված գիտի, թե ինչ միայն չեմ փորձել կյանքում՝ փառք և պատիվ, տղամարդկանց, թմրադեղեր և խմիչք, բայց ոչինչ ինձ երբեք խաղաղություն չտվեց»: Պատմությունը շարունակվում է՝ նշելով, որ երբ Թեյլորը նայում էր իր մահամերձ մորը, որը խաղաղ քնած էր, նա տխրությամբ ասաց. «Թերևս միակ խաղաղությունը մահն է»:

Թղթակիցներից մեկը նշանավոր ոտք երգիչ և դերասան Էլվիս Պրեսլին նրա մահից վեց շաբաթ առաջ հարցրել է. «Էլվիս, երբ դու ասպարեզդ սկսեցիր որպես երգիչ, ասացիր, թե կյանքումդ ցանկանում ես ունենալ երեք բան՝ հարստություն, փառք ու երջան-կություն: Արդյոք երջանի՞կ ես, Էլվիս»: Նա պատաս-խանեց. «Ո՛չ, ես դժբախտ ու միայնակ եմ, կարծես դժոխքում լինեմ»:

Պարզ է, որ հարստությունը, փառքը, կեղծ ընկերությունն ու բարեկամությունը, նույնիսկ երիտասարդությունն ու առողջությունը չեն կարող խաղաղություն բերել: Եվ այս երկու անձերը բացառություն չեն կապում: Ամբողջ աշխարհը լի է հարուստ և նշանավոր մարդկանցով, որոնք դժբախտ ու միայնակ են զգում: Ինքնասպանների թիվը, որոնց մեծամասնությունը երիտասարդներ են, օրեցօր ավելանում է:

Միայնակությունն ու հուսախաբությունը մարդկանց համար մի անլուծելի խնդիր է դարձել: Միայն աղքատներն ու հիվանդները չեն, որ տառապում են միայնակությունից, վախից, ընկճվա-ծությունից ու մտահոգությունից, և խոստովանում են, որ դժբախտ են: Ամենուրեք տղամարդիկ և կանայք, ծերերն ու երիտասարդները, հարուստներն ու աղքատ-ները ցանկանում են գտնել երջանկություն և խաղաղություն: Բայց, դժբախտաբար, չեն գտնում: Ինչո՞ւ, ո՞րն է պատճառը: Պատճառը մեր բաժանումն է Աստուծոց: Աստծո խոսքը հաստատում է այդ. «Ուստի հիշեք, որ... մի ժամանակ դուք առանց Քրիստոս էիք... ու հույս չունեիք...» (Եփես. 2:11-12): Մարդու և Աստծո միջև բաժանման հարցը նման է վարակիչ հիվանդության, ինչպես դարձյալ հստակորեն ասում է Աստվածաշունչը. «Արդարև, ամենքը մեղք գործեցին և Աստծո փառքից զրկվեցին» (Հռովմ. 3:23): Բոլորս էլ մեր էությանը մեղավորներ ենք և բաժանված ենք Սուրբ Աստուծուց: Մեղքի այս խնդիրը բոլորիս մեջ դատարկություն է ստեղծում, որը կարիք ունի լցվելու: Մեծ թվաքանակեա Պասկալը մեկ առիթով ասել է. «Յուրաքանչյուրիս մեջ կա դատարկություն, որն ուզում է լցվել: Այս դատարկությունը Աստծո բացակայությունն է»: Մեղքն է, որ արգելք է հանդիսանում Աստծո ներկայությանը մեր մեջ: Բայց ինչպե՞ս կարող ենք այս արգելքը վերացնել: Այս հարցի լուծումը կարելի է ստանալ միայն Աստուծուց, և քանի որ բոլորս էլ մեղք ենք գործել, միակ լուծումը Հիսուս Քրիստոսն է, որը կարող է այդ դատարկությունը լցնել: «Նա Խաղաղության Իշխանն է»: (Եսայիա 9:6)

Հրեաները գործածում են «Շալոմ» արտահայտությունը, որը «խաղաղություն» իմաստից շատ ավելի լայն նշանակություն ունի:

Դա ոչ միայն նշանակում է պատերազմի բացակայություն, այլև ներառում է բարեկեցության, առողջության և մեր ներքին ու արտաքին ներդաշնակության իմաստները, այսինքն՝ խաղաղություն սրտում և խաղաղություն Աստծո հետ, իսկ այլ կերպ ասած՝ կատարյալ կյանք:

Սուրբ Գրքում կարդում ենք Աստծո տված լուծման մասին: «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի նա, որ հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3:16): Աստված արեց Իր բաժինը, որպեսզի քեզ մոտենա: Նա ուզում է, որ դու խաղաղություն, ուրախություն և հավիտենական կյանք ունենաս: Դու ունե՞ս ուրախություն և խաղաղություն:

Եթե ուրախություն, խաղաղություն և երջանկություն ես փնտրում, ապա իմացիր, որ դրանք քեզ կարող է տալ միայն Հիսուս Քրիստոսը, որը յուրաքանչյուրիս համար մեռավ խաչի վրա: Միայն Քրիստոսի այս մահվանը (այսինքն՝ այն փաստին, որ Նա մեռավ քեզ համար) հավատալու դեպքում դու կարող ես հաշտվել և սրտումդ խաղաղություն ունենալ: Խնդրիր Հիսուսին, որ Նա, գալով սրտիդ ու կյանքիդ մեջ, քեզ փրկի և հավիտենական կյանք պարգևի:

Այդ փափագդ Նրան կարող ես հայտնել հետևյալ պարզ աղոթքով.

«Միրելի Հիսուս, ես օգնության կարիք ունեմ: Խնդրում եմ, որ օգնես ինձ: Ես մեղավոր եմ և այդ պատճառով կյանքս խառնաշփոթ ու անկանոն է: Շատ անգամ ջանացի կյանքս փոխել իմ ուժերով, բայց չկարողացա: Խնդրում եմ, ներիր իմ մեղքերը և ինձ կյանքի նոր սկիզբ պարգևիր: Հավատում եմ, որ Դու սիրում ես ինձ և ինձ համար մեռար խաչի վրա: Հիսուս, ե՛կ

կյանքիս մեջ ու եղիք իմ Տերն ու Փրկիչը: Ես
կարիք ունեմ Քո խաղաղության ու պոռության:
Այժմ հավատում եմ, որ խաչի վրա Քո մահով
արդեն փրկել ես ինձ: